

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Նախնական գնահատման հայտ

ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի փողոց 9/5 հասցեում նախատեսվող
բազմաբնակարան բնակելի համալիր

Պատվիրատու

«Նյու Էյջ քոնսթրաքշն» ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	3
	<<Փայտամշակ>> ՓԲԸ.....	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
1.4.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը.....	10
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	16
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	16
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ	17
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա	19
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	21
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	25
2.1	ՖԻԶԻԿԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	25
2.2	ԿԼԻՄԱՆ	27
2.3	Օդային ավազան	29
2.4	Ջրային ռեսուրսներ.....	31
2.5	Հողերի նկարագիրը	32
2.6	Հողային ռեսուրսներ.....	32
2.7	Կենսաբազմազանություն	33
2.8	Թափոնների կառավարում.....	35
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	36
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	36
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	37
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	37
3.3.1	ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	37
3.3.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	38
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	38
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	39
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	41
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	41
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	43
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	46
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	47
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	48

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն
- 1.2 Ձեռնարկող՝ << Նյու Էյջ քոնսթրաքշն >> ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ Ք. Գյումրի Թբիլիսյան խճուղի 1
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ Ք. Գյումրի Թբիլիսյան խճուղի 1
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ք. Գյումրի

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Գյումրի, Գ.Նժդեհ փող. 9/5 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասագերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին» N16 արձանագրային որոշում,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

17. ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի N1404-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ, ք. Գյումրի, Գ.Նժդեհ փող. 9/5 հասցեում նախատեսվում է իրականացնել բազմաֆունկցիոնալ, բնակելի համալիր, որը բաղկացած է՝ 1 ստորգետնյա հարկից (-3.600 նիշում որը տեղակայված է շինության ողջ պարագծով),

վերգետնյա (հիմնական ծավալը) բաղկացած է 5 և տերրասային 6-րդ և 7-րդ հարկերից:

Նախագծային աշխատանքներն իրականացվում են համաձայն

ճարտարապետահատակագծային առաջադրանքի, համապատասխանում են գործող

շինարարական և նախագծային նորմերին և կանոններին, ապահովում են

պայթյունաանվտանգությունը և հրդեհակայունությունը, հաշվի են առնված շրջակա

միջավայրի վրա ազդեցության գործոնները: Համալիրի էներգաարդյունավետությունը

նախատեսվում է համապատասխանեցնել առնվազն F դասի, ինչի ուղղությամբ

իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման

համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և

վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Շինության օդափոխությունն ապահովվելու ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ որոնց թվում են՝ ավտոկայանատեղիում նախատեսված ծխահեռացման համակարգը համաձայն ՀՀ ԱԻՆ և ՔՇ նորմատիվներին, շենքի ընդհանուր օգտագործման տարածքներում տեղակայված ծխահեռացման և օդի ներածման համակարգը, աստիճանավանդակում իրականացված հավելյալ կոմպենսացիոն համակարգը: Բնակարանների ջեռուցումը, հովացումը և օդափոխությունը նախատեսվում է իրականացնել լոկալ եղանակով:

Համալիրի օրինետացիան ընտրված է հաշվի առնելով տվյալ տեղանքի յուրահատկությունները:

Հիմնական մոտեցումն իրականացված է Գաբեզին Նժդեհ և Պոռշյան փողոցներից: Շինության տեղակայումը

և հարկայնությունն ընտրված են համաձայն գործող քաղաքաշինական և անվտանգության նորմերի, հաշվի առնելով հարակից շինությունների հարկայնությունները և հեռավորությունները վերջինից:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները՝

Հողի ընդհանուր մակերես՝ 0.56565 հա;

Կանաչապատման մակերես՝ 1450 ք.մ.;

Կառուցապատման մակերես՝ 1750 ք.մ.;

Ճանապարհ – 1070 ք.մ;

Մայթ, ճեմուղի – 1386.5 ք.մ;

Բնակարանների քանակ 90 հատ;

Ավտոկայանատեղիների ընդհանուր քանակ 36 ավտոկայանատեղ:

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Բազմաբնակարան բնակելի շենքերի ստորգետնյա ավտոկայանատեղիների տարածքները՝ արտակարգ իրավիճակների պայմաններում օգտագործվելու են որպես ապաստարաններ: Բազմաբնակարան բնակելի շենքերի աշխատանքային նախագծերի մշակման ընթացքում ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան նախատեսվելու են անհրաժեշտ միջոցառումներ:

Ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորվող ճաղավանդակների միջոցով:

Ավտոկայանատեղիների օդի արտածումը կատարվում է ներքևի և վերևի զոնաներից հավասարաչափ:

Ավտոկայանատեղիների օդափոխության ներածման համակարգերում օդի տաքացումը էլեկտրական է:

Շենքի բնակելի մասից և ավտոկայանատեղիներից իրականացվում է ծխահեռացում:

Դիմհարման համակարգեր նախատեսված են վերելակների հորաններում և աստիճանավանդակների նախասրահներում (тамбур-шлюз):

Հակահրդեհային համակարգերի գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից:

Ավտոկայանատեղերի առաջնային հրդեհաշիջման համակարգը նախատեսված է իրականացնել փոշեհատիկային մոդուլներով: Կիրառվող մոդուլների կազմում առկա է ինքնաշխատ թողարկիչ, որը գործարկվում է մոդուլի տիրույթում 63°C ջերմաստիճանից:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են բարձր ջերմության խնայողության ցուցանիշներ:

Բնակելի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները կիրականացնեն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան:

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ 1

Լիցքեր կազմված խճից, խճավազից: Գրունտը թույլ խոնավ է: Ժամանակակից տեխնածին առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն՝ ՇՀՈՒ IV-5-82-ի (246) III կարգ է:

Շերտ 2

Ավազակավեր բաց շագանակագույն, կոպիճի պարունակությամբ,, պինդ թանձրությամբ: Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (33բ) III կարգ է: Այս գրունտները ունեն հետևյալ ֆիզիկա-մեխանիկական ցուցանիշները՝ տես աղ.3.1:

Շերտ-3


Դաջիտային Տուֆ սև գույնի: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (37) V կարգ է:


Շերտ-4


Ավազակավեր բաց շագանակագույն, կոպիճի պարունակությամբ,, պինդ թանձրությամբ: Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (33բ) III կարգ է: Այս գրունտները ունեն հետևյալ ֆիզիկա-մեխանիկական ցուցանիշները՝ տես աղ.3.1:

Աղյուսակ 3.1

	Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը		
			1	2	3
1	Գրունտների անվանումները		լիցքեր	Ավազակավ	Տոֆ
2	Խտությունը $q/սմ^3$	P	1,9	1,92	1,59
3	Միներալների մասնիկների խտությունը $q/սմ^3$	P	-	2,69	2,52
4	Նորմատիվային տեսակարար շաղկապվածությունը, $տ/մ^2$	Cn	-	7,26	3,23
5	Հաշվարկային տեսակարար շաղկապվածությունը, $տ/մ^2$	Ch	-	6,5	2,87
6	Ծակոտկենության գործակից	e	-	0,555	0,605
7	Նորմատիվային ներքին շփման անկյուն, աստ.	Փն	-	20°30′	35°10′
9	Հաշվարկային ներքին շփման անկյուն	փհ	-	18°	31°
10	Ձևախախտման մոդուլը, $տ/մ^3$	E	-	274	104
11	Բնական խոնավություն %	W	-	10,7	1,29
	Ամրության սահման $R_{սեղ.}$, $կգ/սմ^2$	Չոր վիճակ	-	-	97,7
		Ջրի վիճակ	-	-	85
	Փափկելիության գործակից	Kփ.	-	-	0,87
12	Գրունտի հաշվարկային դիմադրությունը $կգ/սմ^2$	R_0	-	2,0	3.5
13	Ներքնակի գործակից $տ/մ^3$	k_h	-	3000	7000
14	Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ըստ CHuП-IV-5-82	աղ. 1	III (246)	III (33r)	V (37)
15	Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		III	III	II







Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնտղությունը ծրագրվում է 30,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուցիկ գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Նախատեսել անվտանգությունը և կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով և ցանկապատի երկայնքով տեղադրել լուսավորություն:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Գյումրի քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 150 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	QTZ 63	1
2	Ռելսային կոունկ	KB 403	1
3	Ավտոմոբիլային կոունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
4	Էքսկավատոր՝	CAT 320	2
5	Գլոն	CAT CS 563	2
6	Բուլդոզեր	CAT D6R	1
7	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	2
8	Ավտոբետոնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	2
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	6
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	3
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		9
13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	6
14	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
15	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս Գյումրի քաղաքում գործող լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $150 \times 70 \times 2.5 / 1000 = 26.25$ տ եւ շինարարական աղբն է 350 խմ ծավալով, այդ թվում տարածքում առկա ինքնակամ շինության քանդումից: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 145 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 900 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 145 \times 0.025) \times 900 = 3406 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 900

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 900 = 1350 \text{ խմ/շին. ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4756.5 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով կստացվի տեխնիկական պայման: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել $d=110$ մմ ջրագծից, ջրահեռացումը՝ $d=500$ մմ կոյուղագծից՝ ըստ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից տրված վերջնական տեխնիկական պայմանի:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով՝ Գյումրի քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի: Էլեկտրամատակարարումը նախատեսվում է <Ղարս> մասնաճյուղի <<Գյումրի>> էլ. ցանցի S4634 6/0.4 <ՏԵ 077> 6.04 կՎ տրանսֆորմատորային ենթակայանից՝ նախապես ԵԿ-ի օղակային սնուցման համար <Գյումրի-1> 110/35/6 կՎ ԵԿ-ից կառուցելով 6 կՎ լարման նոր ուղղություն, S4634 6/0.4 <ՏԵ 077> 6.04 կՎ ենթակայանի 6 և 0.4 կՎ լարման կողմում ապահովելով համապատասխան սեկցիավորում և ենթակայանում 2X630 կՎԱ 10/0.4 կՎ ուժային տրանսֆորմատորներ տեղադրելուց հետո:

Կաթսայատան գազամատակարարումը կիրականացվի Գարեգին Նժդեհ և Պողոսյան փողոցների խաչմերուկում գտնվող սնող $d=219$ մմ միջին ճնշման ստորգետնյա գազատարից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:



2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լեռնագրական տեսակետից տարածքը տեղադրված է Արագած լեռան հյուսիսարևմտյան լեռնաբազկի վրա և իրենից ներկայացնում է հարթավայրային տուֆային հարթավայր: Գյումրի քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին, Երևանից 126 կմ հեռավորության վրա Հետազոտվող տարածքը գտնվում է Շիրակի մարզ, Գյումրի համայնքի Գարեգին Նժդեհ 9/5 հասցեի տարածքում:

Տարածքում առկա է 26.27 քմ մակերեսով ինքնակամ շինություն :

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը տեղադրված է էրոզիոնահողմնահարման սարավանդի սահմաններում: Ռելիեֆը մանր բլրային, առանձին դեպքերում հարթ, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-հյուսիս-արևելք: Տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1520,7-1550,84 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը, անդեզիտաբազալտները և դացիտային լավաները, ծածկված ժամանակակից ալյուվիալ, էլյուվիալ-դելյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ և էլյուվիալ առաջացումներով:

Մեր հետազոտվող տարածքում առկա են տուֆերը առանձին խորություններում ավազակավերի հաստ ենթաշերտերով, որոնց ծածկում են էլյուվիալ-դելյուվիալ և տեխնածին առաջացումները:

Գյումրի քաղաքը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածում, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում, Ախուրյան գետի ձախ ափի ծովի մակարդակից 1475-1605 մ նիշերի վրա: Քաղաքն ունի աշխարհագրական հարմար դիրք, որը սկսվում է Չերքեզի, Ջաջուռի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է, ծածկված լճագետային և հրաբխային՝ շուրջ 350 մ խորության նստվածքներով: Տարածաշրջանի ռելիեֆ բաժանվում է երկու մասի: Հրաբխային, որն ընդգրկում է Ջավախք-Աշոցքի տարածաշրջանը, իր մեջ ընդգրկելով Ջավախքի և Եղնախաղի լեռնավահանները, Չլդրի լեռները և Աշոցքի սարահարթը, մյուս մասն իր մեջ ներառում է Շիրակի ծալքաբեկորավոր լեռնաշղթան ու Շիրակի դաշտը:

Շիրակի մարզի կենտրոնական և հարավային հատվածում տարածվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային շրջանում՝ Աշոցքի սարահարթը, միաժամանակ Շիրակի մարզում են տարածվում Փամբակի, Բազումի լեռնաշղթաների, Եղնախաղի, Զավախքի, Արագածի լեռնազանգվածների մի մասը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանին մոտ գտնվում են Փամբակի և Շիրակի լեռնաշղթաները: Մակերևույթն անտառազուրկ է, բնորոշ են հրաբխային կոներն ու լավային հոսքերը:

Գեոմորֆոլոգիական տեսակետից կառուցապատվող տարածքը տեղադրված է էրոզիոնահողմնահարման լանջերի և հարավային սարավանդի սահմաններում, որտեղ ռելիեֆը մանր բլրային է, առանձին դեպքերում հարթ, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-արևելք: Շրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը, բազալտները, անդեզիտաբազալտները և դացիտային լավաները, ծածկված ժամանակակից ալյուվիալ, էլյուվիալ-դեկուվիալ, դեկուվիալ- պրոլյուվիալ և էլյուվիալ առաջացումներով՝ ավազային, կավային և խոշորաբեկորային գրունտներով:

Հիդրոերկրաբանություն

Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզի դիտարկվող տարածքն աչքի է ընկնում համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանցով:

Մակերևութային և մթնոլորտային ջրերի մեծ մասը թափանցում է տուֆերի տակ տեղադրված տարահատիկ ավազների, մասամբ խճի և կավավազների մեջ, առաջացնելով ստորտուֆային ջրատար հորիզոնը, որի համար որպես ջրամբժ շերտ են հանդիսանում լճային կավերը: Այս հորիզոնն ավելի ջրառատ է, ունի մինչև 15 մ հզորություն: Գրունտային ջրերը սնվում են Շիրակի գոգավորությունը շրջապատող լեռնաշղթաներից, գետերի ստորհունային ջրերից, ժամանակավոր ջրահոսքերից, մթնոլորտային տեղումներից և ոռոգման ցանցի ֆիլտրացիոն կորուստներից: Գետերից ոռոգման նպատակով վերցված ջրերի մոտ 28%-ը թափանցում է գրունտային ջրերի մեջ: Զրերի քիմիական կազմը հիդրոկարբոնատա-կալցիումա- նատրիումային է, հազվադեպ՝ սուլֆատա-հիդրոկարբոնատա-մագնիումա-կալցիումային:

Տարածաշրջանում և տարածքում լայն տարածում ունեն պալեոգենի ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը, որոնք պատկանում են ճեղքային ջրերի տարատեսակներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին: Կառուցապատվող տեղամասում մինչև 30 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր բացահայտվել են:

Հիդրոերկրաբանական տեսակետից, ըստ կատարված ուսումնասիրությունների և գրականական տվյալների տեղանքում գրունտային ջրերը գտնվում են 9.0-9.6 մ հորիզոններում:

Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ II -20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ: աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը մտնում է Սևանա-Շիրակի սինկլինալի մեջ, որը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և ներկայացվել է Գյումրի քաղաքի համապատասխան կլիմայական ցուցանիշները: Բնութագրվող տարածքը գտնվում է «Ցուրտ» կլիմայական շրջանում: Բնորոշ է ցամաքային կլիման: Բացարձակ նվազագույն ջերմասիճանը կազմում է -36°C , բացարձակ առավելագույն ջերմասիճանը՝ 38°C : Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1.3 մ/վրկ: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 498 մմ: Ձյան ծածկույթը ձևավորվում է նոյեմբեր ամսին, ձյան ծածկույթով օրերի թիվը կազմում է մոտ 94 օր, իսկ ծածկույթի առավելագույն բարձրությունը՝ 61 սմ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը 142 սմ է, ցուրտ սեզոնին գերակշռող են համարվում հյուսիսյան քամիները (ՀՀՇՆ II-7.01-2011):

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Գյումրիի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Գյումրի	1528	-9.0	-7.2	-1.2	6.7	11.7	15.5	19.5	19.5	15.2	8.5	1.7	-5.1	6.3	-36	38

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71	39

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը			
	ըստ ամիսների												տարե- կան	տասնօրյա առավելա- գույնը, սմ	օրերի թիվը	ջրի առա- վելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Գյումրի	<u>23</u> 17	<u>25</u> 26	<u>30</u> 24	<u>55</u> 30	<u>90</u> 53	<u>71</u> 55	<u>46</u> 40	<u>36</u> 47	<u>31</u> 64	<u>39</u> 39	<u>28</u> 25	<u>24</u> 32	<u>498</u> 64	61	94	129

2.3 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Գյումրի համայնքի մթնոլորտային օդում իրականացվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մշտադիտարկումներ քաղաքում գործող 24 դիտակետերում և 1 ստացիոնար դիտակայանում:


Քաղաքի անշարժ դիտակայանում մթնոլորտում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 301 փորձանմուշ: Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն:

2020թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 1.66 է (փոշի՝ 0.56, ծծմբի երկօքսիդ՝ 0.73, ազոտի երկօքսիդ՝ 0.37):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու կոնցենտրացիայի նվազման տենդենց: Քաղաքի 24 շարժական դիտակետերի պասիվ նմուշառիչներով մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2165 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.

Գյումրի քաղաքում որոշված աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



2.4 Ջրային ռեսուրսներ

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2019 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5%-ը գնահատվել է 2-րդ դասի («լավ» որակի), 40.8%-ը գնահատվել է 3-րդ դասի («միջակ» որակի), 11.2%-ը գնահատվել է 4-րդ դասի («անբավարար» որակի) և 21.4%-ը գնահատվել է 5-րդ դասի («վատ» որակի):

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, Գյումրի քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, մոլիբդենով, երկաթով, ընդհանուր ֆոսֆորով և կախյալ նյութերով: Բազարան գյուղից ներքև հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, մանգանով, երկաթով և կախյալ նյութերով:

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, երկաթով և բորով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով:

2.5 Հողերի նկարագիրը

Շիրակի մարզում առանձնացվում են հողերի տարածման հետևյալ հիմնական գոտիները՝ Լեռնաշագանակագույն հողեր-տարածվում են մարզի հարավում, նախալեռնային գոտու չոր տափաստաններում, Արագածի ցածրադիր լանջերից մինչև Ախուրյան գետի հովիտը՝ 1450-1600 մ բարձրությունների սահմաններում: Ձևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում: Հումուսի պարունակությունը կազմում է 3-4%: Լեռնատափաստանային սևահողեր - սրանք տարածվում են մարզի 1500-2200 մ, երբեմն մինչև 2400-2500 մ բարձրությունները, ընդգրկում են Շիրակի և Աշոցքի սարահարթերի մեծ մասը և դրանք եզերող նախալեռնային և միջին բարձրության գոտիները: Հողի վերին շերտը հումուսացված է, հումուսի պարունակությունը հասնում է 4-5%-ից մինչև 10-11%, իսկ սևահողերի միջին հզորությունը՝ 50-65 սմ: Լեռնային, մարգագետնատափաստանային հողեր - տարածվում են սևահողերից վեր 2200-ից մինչև 2600-2700 մ բարձրություններում: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային մարգագետնային հողեր - տարածված են մարգագետնատափաստանային հողերից վեր: Հողաշերտի հզորությունը փոքր է. վերին մասերում այն հազիվ հասնում է 15-20 սմ-ի: Լեռնամարգագետնային հողերը ծածկված են բարձրորակ արոտներով:

2.6 Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև գրունտային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 9000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 3140 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Գյումրու քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կալահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.7 Կենսաբազմազանություն

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում են ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Շիրակի մարզում բուսական աշխարհը խիստ բազմազան է, որին նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Գործունեության տարածքը գտնվում է Գյումրի քաղաքային միջավայրում, կառուցապատված գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը հանդիպում են տեղ-տեղ: Տարածքն արդեն իսկ խախտված է, նախկինում օգտագործվել է տարբեր արտադրական նպատակներով: Քարքարոտ, ավազային, հողածածկույթի վրա տեղ-տեղ վայրի ծառատեսակներ են, տեղ-տեղ ինքնաբերաբար աճած նոսր բուսականություն:

Քանի որ բնութագրվող տեղանքը գտնվում է արդեն իսկ յուրացված և կառուցապատված քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ և կենդանիների միգրացիոն ուղիներ չեն կարող դիտարկվել:

Ստորև բերված է Գյումրու տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

Բուսական աշխարհ: Գյումրու տարածաշրջանը Շիրակի մարզին բնորոշ հանդես է գալիս բուսական աշխարհի խիստ բազմազանությամբ, ինչին նպաստել է տարածաշրջանում բարձրությունների մեծ տարբերությունները:

Տարածքի բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանային տիպին, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտա-հացազգի խոտաբույսերի տարածմամբ: Տարածաշրջանում առկա են հացահատիկային զանազան խոտաբույսերի ֆորմացիաներ: Լեռնային տափաստանները ներկայացված են երեք՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստանների ֆորմացիաներով: Բնութագրվող տարածաշրջանում առավել հանդիպող բուսատեսակներից են. բարդին (*Populus*), ակացիան (*Robinia*), թղկի (*Acer*), սզնի (*Crataegus*), ուռատերև տանձենի (*Pyrus salicifolia*), սովորական հացենի (*Fraxinus excelsior*), աղեղնաեզր ասպիրակ (*Spiraea crenata*), արևելյան ծորենի (*Berberis orientalis*),

չմենի (*Cotoneaster integerrima*), վրացական ցախակեռաս (*Lonicera iberica*), սովորական լեռնաչամիչ (*Ephedra procera*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), թեղի (*Ulmus*), ալուշա (*Prunus*), փշատենի (*Elaeagnus*), ուռենի (*Salix*), մասրենի (*Rosa canina*) այլն բուսատեսակներ:

Շիրակի մարզում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ: Կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն կարող լինել, քանի որ նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել զարգացած քաղաքային, կառուցապատված միջավայրում՝ մարդածին ազդեցության տակ:

Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ:

Գյումրու տարածաշրջանի կենդանական աշխարհը ևս հանդես է գալիս Շիրակի մարզին բնորոշ կենդանական ձևերով, որոնք ևս ներկայացված են տափաստանային և բարձր լեռնային կենդանական ձևերով և քիչ արտահայտված են տեղական էնդեմիկ ձևերը: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դոդոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև.

1.Մողես *Lacerta armeniaca* 2.Դալի մողես *L. dahli* 3.Վալենտինի մողես *Darevskia valentini* 4.Նախյան մողես *L. nairensis* 5.Հայկական իծ *Vipera raddei* 6.Տափաստանային իծ *V. erivanensis* 7.Խայտաբդետ իժանման սահնօձ *Coluber ravergieri* 8. Նապաստակ *Lepus europaeus* 9. Աղվես *Vulpes vulpes* 10. Գայլ *Canis lupus* 11. Դաշտամուկ *Microtus arvalis* 12.Կանաչ դոդոշ *Pseudepidalea viridis*

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային

երթնեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

2.8 Թափոնների կառավարում

Գյումրի համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 26.25 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 350 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/ (հիմնականում կազմված են իներտ ֆրակցիաներից) (բետոն, աղյուս, կերամիկա և այլն, այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս թաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱԹՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Ջրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1450 քմ:

- Տարածքում նախատեսվում է տնկել թխկի 8 հատ, իլենի 35 հատ, լաբորնում 2 հատ, խենոմելեա 10 հատ, ասպիրակ 12 հատ, բարբարիս 8 հատ:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս կառաջնորդվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 180 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Գյումրիի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 30 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն

հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹԻԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համայնքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, ոչ կեսունակ ծառերը և թփերը կփոխարինվեն նորերով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1700000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	30x35000	1050000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	10x25000	250000
Ամբողջ շինարարության համար		1700000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուին պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեմներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարանջատված: (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 20 մայիսի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՆՅՈՒ ԷՅՋ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ. Նժդեհի փողոց 9/5 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ ԿԿ Գյումրի սպասարկման գրասենյակում 17.05.2021թ-ին ստորագրված անշարժ գույքի վաճառքի պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-1225-0208

Մակերեսի չափը (հա)՝ 0.56565

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 20052021-08-0045, գաղտնաբառ՝ 4RGABCTBKDBS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա է 26.27քմ մակերեսով ինքնակամ շինություն:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գոռ Աղաբաբյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 20052021-08-0045, գաղտնաբառ՝ 4RGABCTBKDBS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Շիրակի մարզ Գյումրու համայնք
(մարզը, համայնքը)
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
N 88 « 18 » հունիսի 2021 թ.

Օրբելյու Բնակելի համայնքի կառուցում
(օրբելյու անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, կապիտալ նորոգում, ամրակայում, վերականգնում և այլն, օրբելյու անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը)
բարձր ռիսկայնության աստիճան՝ 4-րդ կատեգորիա նախագծային փաստաթղթերի մշակման համար
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)
Գտնվելու վայրը ք. Գյումրի Գ. Նժդեհի փողոց 9/5
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող «Նյու էջ Քոնսթրաքշն» ՍՊԸ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, քննության վայրը, հետախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)
Առաջադրանքի տրամադրման հիմքը Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման
պետական N°20052021-08-0045 վկայականը, տեխնիկական պայմանները, կառուցապատողի
հայտը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 07.06.2021թ. N°01/11.1/4943-2021 գրությունը և
էսքիզային նախագիծը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման,
անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)
Առաջադրանքի գործողության ժամկետը երեք տարի
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական
նշանակությունը՝ բնակելի և հասարակական կառուցապատում
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը 0. 56565 հա , կադաստրային ծածկագիրը՝ 08-001-1225-0208
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))
3. Հողամասի առկա վիճակը ազատ է կառուցապատումից
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները Գ. Նժդեհի, Պոռոջան փողոցներ
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և
սարքավորումներ (ջրամատակարարման,
կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի
մատակարարման, էլեկտրամատակարարման,
էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) կից տարածքով անցնող
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր Պոռոջան փողոց, քաղաքնակարան բնակելի շենքեր, առևտրի կենտրոն
(կից հողագտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)
7. Բնության հատուկ պահպանվող և
(կամ) պատմամշակութային հուշարձանների տարածք) չկան
(պահպանական գոտիներ)
(հուշարձանի անվանումը , կարգավիճակը և այլն)
8. (*) Հատակագծային սահմանափակումներ Քաղաքաշինական գործնության հատուկ
կարգավորման օրբելյու:
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օրբելյուների,
ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օրբելյուների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԴԻՎԱԶՁՆՈՒՄ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակել բնակելի համալիրի կառուցման նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական № 20052021-08-0045 վկայականով ամրագրված հողամասի սահմաններում, հաշվի առնելով ստեղծված քաղաքաշինական միջավայրի պայմանները, Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական նորմատիվ ակտերի պահանջները և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից համաձայնեցված էսքիզային նախագիծը:

(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)

9.1 (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից(մետր) Պողոտան փողոցի՝ գլխավոր հատակագծով նախատեսված կառուցապատման կարմիր գծի ուղղությամբ

9.2 (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) նորմատիվ պահանջների համաձայն

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից համաձայնեցված էսքիզային նախագծի

9.4 կառուցապատման խտության գործակիցը _____
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5 կառուցապատման տոկոսը 40 %
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով)

9.6 կանաչապատման տոկոսը մինչև 60 %
(կանաչապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով%)

9.7 այլ պահանջներ հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվ պահանջները

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը Քանդել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշված ինքնակամ շինությունները ամբողջ ծավալով

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները նախատեսել ստորգետնյա ավտոկանգառ և պատսպարաններ
12. (*) ինժեներական ցանցեր և Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
սարքավորումներ

Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, Համաձայն «Վեդիա Ջուր» ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանների
տաք ջրի մատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Համաձայն <<Էլցանցեր>> ՓԲԸ <<Ղարս>> մասնաճյուղի կողմից տրված տեխնիկական պայմանների
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում Համաձայն «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ - ի կողմից տրված տեխնիկական պայմանների
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը Կցվում է _____
(համաձայն N 11 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ _____
12.6 աղբահանություն Գյումրու քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում արտաքին ջրահեռացումը կազմակերպել ուղղաձիգ հատակագծման միջոցով
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում Հարակից տարածքը բարեկարգել, կանաչապատել և տեղադրել գիշերային լուսավորության էլեկտրական սարքեր, մշակել բարեկարգման և ուղղաձիգ հատակագծման նախագիծ:
(լանդշաֆտային ճարտարապետության վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փորք ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր Տեղական տուֆ, բազալտ, երկաթ/բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղ, ապակի, փայտ, թիթեղ, արհեստական շինանյութեր, երեսապատման բարձրորակ նյութեր:
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ նախատեսել մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ նորմատիվ պահանջների համաձայն, ապահովել հրեջ հիդրանտների առկայությունը
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ նախատեսել հաշմանդամների և սակավաշարժուն մարդկանց տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ
19. Շրջակա միջավայրի պահպանում Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ:
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում մշակել շինաշխատանքների կազմակերպման նախագիծ
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը երկու տարի, էսքիզային նախագիծ և աշխատանքային նախագիծ
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման հավելված N2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի նշանակվող քննադատի իրավասությունները՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտի վրա)
23. Միջանկյալ համաձայնեցում ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի և ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ:
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ օրենքով սահմանված կարգով
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում Գյումրի համայնքի ղեկավարի հետ մինչև նախագծային աշխատանքների սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ կամ օգտագործողի հետ
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահպանման տեղադրում Բնակարանների սպասարկման համար առաջին հարկում նախատեսել բաժանորդային փոստարկղերի տեղադրման համար համապատասխան տարածք

27. Այլ պայմաններ Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.09.2017 թվականի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» N128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՅԵՐ

«ՂԱՐՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

☒ 377503, ք.Գյումրի, Շարա-Տալան -1, հեռ., 060-380162

N 04-98-598
<18> 06 2021թ.

ՀՀ Գյումրու համայնքի
ղեկավարի առաջին տեղակալ
պ-ն Ռ. Սանոյանին

Հարգելի պարոն Սանոյան.

Ի պատասխան Ձեր 11.06.21թ. N02/02.3/8206-21 գրությանը՝ կապված Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոց 9/5 հասցեի հողամասում (կառուցվելիք) բնակելի համալիրի համար նախնական էլ. սնուցման ելակեդրային տվյալներ տրամադրելու հետ հայտնում ենք Ձեզ, որ ներկայացված տարածքի ուրվակի վրա առանձնացված հողամասը համընկնում է <Ղարս> մասնաճյուղի <Գյումրի> էլ. ցանցի S4634 6/0.4 ՏԵ 077 6/0.4 կՎ ԵԿ-ի և վերջինիս 6 և 0.4 կՎ մալուխային գծերի անվտանգության գոտիների հետ, ուստի խնդրում ենք Ձեր աջակցությունը և հանձնարարականը համապատասխան ծառայություններին՝ միջոցներ ձեռնարկելու նշված էներգետիկ օբյեկտների անվտանգության գոտիները վերականգնելու և ՀՀ Կառավարության 2 ապրիլի 2009 թվականի N 363-Ն որոշմամբ հաստատված՝ «էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ»-ի պահանջների ապահովման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ հայտնում ենք Ձեզ, որ միայն նշված էներգետիկ օբյեկտների անվտանգության գոտիների վերականգնման խնդրի լուծումից հետո կարելի է դիտարկել Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ փողոց 9/5 հասցեի հողամասում (կառուցվելիք) բնակելի համալիրի համար նախնական էլ. սնուցման ելակեդրային տվյալների տրամադրումը սպորտ քերված տարբերակով՝

տարածքի էլեկտրամատակարարումը կարելի է իրականացնել.


- <Ղարս> մասնաճյուղի «Գյումրի» էլ. ցանցի S4634 6/0.4 <ՏԵ 077> 6/0.4 կՎ տրանսֆորմատորային ենթակայանից՝ նախապես ԵԿ-ի օղակային սնուցման համար <Գյումրի-1> 110/35/6 կՎ ԵԿ-ից կառուցելով 6 կՎ լարման նոր ուղղություն, S4634 6/0.4 <ՏԵ 077> 6/0.4 կՎ ենթակայանի 6 և 0.4 կՎ լարման կողմում ապահովելով համապատասխան սեկցիավորում և ենթակայանում 2X630 կՎԱ 10/0.4 կՎ ուժային տրանսֆորմատորներ տեղադրելուց հետո:

Տեղեկացնում ենք, որ կառուցվող բնակելի համալիրի էլ. համակարգի էլեկտրական ցանցին միացումը իրականացվելու է համաձայն ԷՄՕԿ-ի թիվ 2 գլխի պահանջների:

/Տնօրեն

Գ.Ֆարգադյան

Գ. Մարտիրոսյան



Ելից 759/11218-21



«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ՇԻՐԱԿԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍՆԱՅՈՒՂ

ЗАО «Газпром Армения»
ШИРАКСКИЙ ФИЛИАЛ ПО ГАЗИФИКАЦИИ И ГАЗОСНАБЖЕНИЮ

2601, ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չայկովսկի 2: 2601, РА, Ширакская обл., г. Гюмри, ул. Чайковского 2
Հեռ. /Тел: (+374312) 5 28 06: Ֆաքս /Факс: (+374312) 5 28 06. E-mail: gazgymri@yandex.ru

«14» 06 2021

№ 01-12/1200

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ռ.ՍԱՆՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանույան

Ի պատասխան Ձեր 11.06.2021թ. թիվ 02/02.3/8206-21 գրության հայտնում ենք, որ Գարեգին Նժդեհի փողոց թիվ 9/5 հասցեում նախագծվող բնակելի համալիրի գազիֆիկացման համար, որպես միացման կետ կարող ենք տալ Գարեգին Նժդեհ և Պռոշյան փողոցների խաչմերուկում գտնվող սնող d=219մմ. միջին ճնշման ստորգետնյա գազատարից:

Գազաֆիկացման տեխնիկական պայմանների եզրակացությունը կտրվի նշված օբյեկտի կառուցումից հետո:

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ

Ր.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ա. Մինասյան



« 14 » հունիսի 2021թ.
N 100/12078

ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի համայնքի
ղեկավարի առաջին տեղակալ
պարոն Ռ. Սանոյանին
ՀՀ, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ, թիվ 1

Հարգելի պարոն Սանոյան,
Ի պատասխան Ձեր 11.06.2021թ. թիվ 02/02.3/8206-21 գրության՝ կապված ք. Գյումրի Գ. Նժդեհի փողոց 9/5 հասցեի հողամասում բնակելի համալիր կառուցելու համար ելակետային տվյալների տրամադրման հետ, հայտնում ենք, որ ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել d=110մմ ջրագծից, ջրահեռացումը՝ d=500մմ կոյուղագծից՝ ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված վերջնական տեխնիկական պայմանի և ելակետային տվյալների հիման վրա մշակված ու համաձայնեցված նախագծի:

Հարգանքով՝ *Ս. Շահինյան* Գլխավոր տնօրեն
Ս. Շահինյան

Ծրից 1-10845-21
14.06.2021թ.

Պատասխանատու՝
«Հյուսիս» ՇՏ տնօրեն
Ա. Եղիկյան
Հեռ. 077 288 228

«ՎԵՈԼԻԱ ՋՈՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 12078
14.06.2021թ.